

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով
Տարեկան . . . 14 ծր


Վեցամսեայ . . . 7 ծր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԵԻԿ

Ծանոցման սողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅԵ

Redaction du journal

Le vendredi

VARNA (Roum)

Редация

на вѣстникъ

Иразунъ

ВАРНА

Գրութեանը եւ չեմ
տրոնիր

Կաթիլ տնկալի պատճառաւ մը «Իրաւունք»-ի այս թիւը փոխանակ երէկ տպուելու, այսօր հինգ շաբթի մամուլը յանձնուեցաւ :

ԶԱՐԻՔԵՆ ԲԱՐԻՔ

Բարձր աշխարհի ուշագրուած թիւերը գրաւող ու պետական գիւտնադէտները զբաղեցնող ռուս-ճարտարական պատերազմը կրկնակ տեսարան մը կը ներկայացնէ այս օրերը մին պատերազմի դաշտը, միւսը հաշտութեան բանակցութեան կանաչ սեղանը : Այս երկու տեսարաններն ալ հաւասարապէս հետաքրքրական եւ ուշագրաւ են : Առաջինը, պատերազմի դաշտը, հակառակ սուտ ու շինծու հեռագրաւորերու տարածայնութեանց թէ «Լինէվի» ու իր սպայակոյտը վստահութիւն կը յայտնեն նոր ճակատամարտով մը յաղթական ելնելու, ցոյց կուտայ թէ Ռուս բանակը ոչ քանակով եւ ոչ ալ որակով առաւելութիւն չը ներկայացնէր ճարտարական հանգեպ, եւ ընդ հակառակը չէնքի, միթէքի ու զոհուելու պատրաստականութեան մասին շատ վար կը մնայ թշնամիէն : Արդէն Պալթիկի տարմիղներուն բնաջնջումէն ի վեր Օւստայի յառաջխաղացութիւնները եւ Լինէվիի նահանջութիւնները որոշ ցոյց կուտան յախճախիչ նոր պարտութեան մը նախազգացումը որ կը տիրէ Ռուս սպարապետէն սկսեալ մինչեւ յետին զինուորի որտեղուն մէջ : Իսկ միւս կողմէ ճարտար խորապէս համոզուած են թէ իրենց նոր տանկիք յաղթանակ կը յար եւ նմանը փոխի ըլլայ Թոկոյի յաղթանակին : այսինքն Ռուս բանակին կէսին բնաջնջումը եւ միւս կէսին գերեզմարութիւնը Անտիք առաջին յաղթանակներէն քաջաբերուած են եւ այս հաւատքով է որ պիտի կըն-

ւին եւ այս համոզմամբ է որ պիտի նետուին իրենց յուսարեկ թշնամիին դէմ : Հաւատքին դերը անուշտանակի է, մանաւանդ կուտայ մէջ. հետեւեալը Ռուսերը բան մը չունին սպասելիք պատերազմի գաշտէն, անոնց ակնկալութիւնը կեդրոնացած է վաշիկի թնկի մէջ շտկուելու վրայ եղալ գէպի կանանջ, սեղանը, բայց չեն գիտեր թէ ինչ աստիճան ծանր պայմաններ պիտի առաջարկուին ճարտար պատուիրակներու կողմէ : սակայն սա յայտնի է որ ճարտարիք վճռած են Մայր Առեւելքի մէջ Ռուսերու հետք չը ձգել : Արդէն Մ. Բուզովէի երկու կողմին հաշտութեան առաջարկը ըրած պահուն համոզում գոյացուցած էր թէ Ռուսերը կամայականաբար ճարտարի ալ պահանջին գոհացում պիտի տանալ ինքն Մանչուրիան, վրտաբանութեամբ եւ քանի մը ռուսական կողմները պիտի ձգեն թշնամիին : Բայց կասկածելի ու գծաւորութեան կէտը որ կայ պատերազմական տուգանքի խրեղիւն, զոր տնտեսաւոր ճարտար պատի պահանջէն եւ Ռուսիա չորտի ոգէ ընդունել, որովհետեւ չպիտի կրնայ վճարել առանց մէկէ աւելի փոխառու պետութեանց զօնքոյր իր հասցիութեան վրայ դնել տալու, ինչ որ եղած է ցարդ թուրքիոյ համար :

Ռուսիան արդէն 8-10 միլիոն առ ֆր. Պրանսայի պարտաւորուած, եւ ծովային ուժերէն զրկուած ըլլալէ յետոյ եթէ պատերազմական տուգանքի պարտքովն ալ բռնաւորուի երկրորդական բայց սնանկ պետութեան մը կարողը անցած, պիտի չին : Իր այս տնկումը բնականապէս առիթ պիտի ընծայէ իր մրցակիցներուն որ իրենց ծրագիրները գործադրել ելլեն անյայտալ : Բայտնի է թէ երկրագնդիս երեք մասերուն մէջ Ռուսիոյ էն խորամանկ մրցակիցը Անգլիան է, մանաւանդ մերձակայ Արեւելքի մէջ. ուստի Անգլիա պիտի փութայ իր դադարաւորութիւնը ապահովելու հա-

մար ռուսական սահմաններուն վրայ պատուարներ կանգնել, Աֆգանիստանի, Պարսկաստանի եւ Թուրքիոյ մէջ այն տեսակ կադմակերպութիւններ ներմուծել, որ կարելի չըլլայ ապագային զօրանալիք Ռուսիոյ կողմէ սեւեռանքութիւն :

Մանաւորելով թուրքոստանական սահմաններուն կրկնապատկան ոչ մէկ պետութիւն չը պիտի հակառակ վարուի Անգլիոյ, եթէ սա ելլէ այդ սահմանագրի հայկական գաւառները ինքնավար նահանգի մը վերածելու ընդ պաշտպանութեամբ հինգ մեծ պետութեանց : Արդէն այս է եղած Անգլիոյ ձգտումը տասնեակ տարիներէ ի վեր, զոր իրականացնելու արգելք կըլլար Ռուսիան : Ահա այդ արգելքը այսօր կը ջնջուի գոնէ մամանակի մը համար ճարտարական յաղթանակներուն շնորհիւ, որոնցմէ յայտ կը ծագի հայկական գաւառներու տարաբաղդ բնակչութեան համար, Հայերուս համար : Թէեւ մենք չարաբաղդ ազգ մը չենք, բայց մեր կամքէն անկախ կերպով Ռուսիոյ գլխուն եկած չարիքէն մեզ համար առաջ դառնիք բարիքը հրճուանքով կընդունինք, պատրաստ գտնուելով նոյնիսկ մեր կողմէ զոհաբերութիւններու :

ԽՈՍՏԱՆԱԽՑ ԱՊԱԳԱՅ

(Շար. 33րդ. Թուէն)

ԺԱ.

«Ոսպը քարտէ էր».

Դ. րդ Զօրաբանակի հրամանատար Զէքի փաշան Մաճառ սրկայ մըն էր. նման թուրք փաշաներու չ'երկնչիր եւ չ'ակնածիր փառնաբան : Սասունի առաջին կոտորածի քննիչն էր մին երբ արդար բարկութեամբ մը զիտել կուտար Զէքի փաշայէն կատարուած անպարտ զաղանուծիւնները, վերջինս իրեն յատուկ

լրբութեամբ մ'այսպէս պատասխանէր .

«Մենքուր եւ չեմ. Սուրբանը հրաւիրեց եւ եւ գործադրեց. Ահա Սուրբանին հրաւիրագիրն» բնկով ցոյց կուտար զայն քննիչ մասնաւորի անգամներուն, որոնք բաց աչօք տեսան ափ ի բերան մնացած Գաղան փառնաբան հրամանագիրը, եւ սոսկուածով անդեկազրեցին այս ամենի իրենց կառավարութեանց :

Մեծ Մարգարայնը լսեց այս բանը, պահ մը գիւտաբեցաւ. եւ հրամայեց 96 ի կոտորածն ալ սարքել մեղմիւ, որ գործադրուեցաւ շատ հեշտիւ, զի մինք վաղօրոք մեր արդայական թիրախներն արձակել ըսկըսած էինք թղթով, զրքով եւ աղայ մունտիկներով. այդ օրերուն մէջ հեղեղանման գուրս թափեցան ամեն ազգի բեմի եւ գրչի հերոսները եւ գոռ ու գոչումով զորոգանել միթիկներու սրաները եւ օրագրերու սինակները. նախապահան բառերու գէզեր, ոճեր չը մնաց որ թափին կարմիր փառնաբան գլխուն. փառնաբան անոնց անդը հազարաւոր ոսկիներ կաշառ կուտար եւ կը խոստանար որ հրապարակի թերթերը ինչոնին փոխեն եւ կամ մեղմացնեն. մին կաններ միւսը կ'սկսիր, այնպէս որ գողան փառնաբան բառական անիւ գոլթեան մասնաւոր կերեւել, զի բացի հայկական. հարցէն, մէջտեղ կար Մակեդոնական, Ալբանական եւ ժէմ թիրաբերու ալ ինչոյններ. մին քանդմիւսն աւելի կ'ընտ, բայց հայկական միւսն գամայն սպանական, զի եւրոպոյ հանրային կարծիքն իստա տաք. ցած կերեւել, բան մ'ալ կար որ զինքը աւելի կը յուսահանցնէր, այդ իւր նիքով Զար եղբորն իրմէ ցրտանալն եւ Ռուսո թուրք պատերազմէն մնացած տուգանքներու պահանջին էր : Գաղան փառնաբան հոգեկան զրոյթիւնը գնալով կը վատթարանար. տոտապանքէն հիւսնգալին անկողին ինկաւ մի քանի օր. այնպէս որ բոլոր թերթերն սկսան կարծիք յայտնել թէ, փառնաբան քիչ ատենէն պիտի մեռնի. բայց զըմբողդարար յանկարծակի պատուեց պատանգը եւ սկսաւ մազցիլ գէպի կենդանութիւն :

«Հինան չաղուած մնաց».

Եւ բնի բացատրեց այս յանկարծակի :

ԺԲ.

Մուլթան Հափտ երբ իր եղբոր՝ Սուլթան Մուրատի գահը յափշտակեց, Օսմանցի հին Սուլթաններու նման վայրկեանական տպաւորութեանց

Ինչպիսիք երկրին ճակատագրին հետ խաղալ չուզեց, այլ միշտ խոհականութեամբ. եւ աւագանիներու խորհրդակցութեամբ, թէ եւ տոնին խնդրոյ մասին իւրովի կը յղանար արարութիւնք որոշումը. բայց վերստին խորհրդակցութեան կը դնէր :

Իւր գահակալութեան սկզբի տարիները իւր խորհրդականներու ընդամենն ալ խոհական եւ մտացի թիւրքերէն, բայց Սուլթանը չուզեց անոնցմով քառակուսանալ, այլ ձրանսայնն ալ անձնական խորհրդականներ բերել տուաւ որոնք իրաւաստ կը վարձատրէր սկիզբները, երբ անոնց ալ անամբջ լինելը հասկացաւ. մինչեւ իսկ խոստացած թոշակներն չը տալով ճամբու գրաւ : « Սուլթանն Համիտ եւ իւր թագաւորութիւնը » գիրքի հեղինակը այս ճամբուածներէն մէկն էր :

96ր կոտորածի ժամանակուայ խորհրդականը Խալաֆի խորամանկ Ռոզուլաֆօ փաստարանն էր, Կարմիր Գազանի պահապան հրեշտակը. սա յաջողեցաւ փրկել Սուլթանը իւր հիւանդագին ծանր վիճակէն, եւ Սուլթանը իսկապէս ուրախութենէն բուժուած գնաց ուրբաթի աղօթքը կատարել, վերագարծին յանկարծակի յայտարարեց, իբրեւ թէ, Ալլահն ներշնչուած, պարտաւոր կըզգայ որ դեռ չը մեռած իւր կենսագրութեանը գրէ եւ իւր կենդանութեան հրատարակել տայ :

Փառելշահին այս որոշումը կայծակի արագութեամբ արձագանքեց բոլոր եւրոպական արքունիքներու մէջ, որմէ ուժգնօրէն ցնցուեցաւ եւ յուզուեցաւ Պետրքուրգի դանիշը մաս մըն ալ Պերսիոյն Նիքոլա, փոսթայ գրել իւր կարմիր Համիտ եղբորը աղաջանաց թուղթ մը որ թողու այդ կենսագրութեան հրատարակումն իւր մահուանէն վերջ. բայց Սուլթան-Ռոզուլաֆօն սա պայմաններուն տակ ընդունեցաւ :

1. — Հայկական խնդրոյն մէջտեղէն բարձուելուն յանձնառու լինել ամեն գոյով եւրոպական գիւտանագիտութեան առջեւ :

2. — Ռուսահայերն ալ Տաճկահայոց վիճակին հասցնել որ միմեանց օգնելու ղերբութիւններ չունենան :

3. — 77 ի Պատերազմէն մնացած առանելի մասին երկար պայմանաժամ տալ :

Նիքոլան ընդունեց իւր կարմիր Գազան եղբոր այս առաջարկներն, եւ փառիշտն ալ այդ ընդունելութեան գիրը իբր յուր յուրեղ կախեց իւր վզէն եւ սկսաւ ի խոր քուն մտնել, զի իւր գիրը փոխանցուած էր իրմէ աւելի կատաղի դադանի մը ձեռքը :

Եւրոպական գիւտանագիտութիւնը, ծափերով միթիւն ընող Հայաստանները, եւ «Անկցի Սուլթանը» զոռացող եւ պոռացողներու ընդ ամենն ալ հիասթափուած ուսերնին թոթուեցին ու մեղ ըսին, «Ժամանակի մեծ խնդիրներն կը լուծուին երկաթով եւ արիւնով, մեր երկաթներն ու արիւններն ձեզ համար գուլացած են » :

Թուրքէն Միտիլլի հասնող եւ Սուլթանին սպառնացող ֆրանսական զրահաւորներն չը յօժարեցան յանուն հայ ազգին բառ մը իսկ արտասանել, զի Զար-Նիքոլա-Սուլթանը յանկարծ յօնքերը պոռտեց, որմէ ահաբեկեցան թուրքաւոր ձրանսացիները :

Ալլահ մեզ համար լքման չըջանը սկսած էր :

ԺԳ.

Տաճկահայր լիւթի ստացաւ իւր կարմիր Սուլթանէն. իւր հինգ երկար դարերու անձնուէր ծառայութեան վարձքը, ձերմակ արծիւ թագաւորն ալ անտարբեր չը մնաց իւր հայ հպատակներուն նկատմամբ. որոնք երկու հարիւր տարիէ ի վեր, ոչ մի ջանք եւ զոհողութիւն չը խնայեցին քրիստոնեայ թագաւորին սրբի յաջողութեանը եւ աշխարհակալութեանը համար :

Թէեւ, Ռուսը կովկասի հարիւր տարիէ որ տիրած են խարէութեամբ, բայց անկէ հարիւր տարի յառաջ ալ մեր քաջ եւ հարուստ Մեխմետբէր Բարեմուլթեմար միշտ յարաբերութեան մտած էին Ռուսիկի ներգաւաւր եւ վատ թոռնիկներուն հետ, հազար եւ մէկ ծառայութիւններ մատուցանել անոնց, լինի բանիւ խորհրդով, դրամով, եւ շատ անգամ ալ իրենց պատուական արիւններով :

Հայ Մեխմետեմար եղած են այդ անլի մարմնով, անլի մտքով ու խելքով ռամիկ քրիստոնեաներուն քաջաբերդներն, համոզողներն եւ դէպքի կովկասի առաջնորդելով զանոնք տէր դարձնողներն, որպէսզի այս օր ալ երեսն ի վարձատրութիւն այդքան բոլորանուէր ազնիւ ծառայութեանց, հայ ժողովուրդը ջարդու փրշուր ընեն ու կենդանւոյն ալին, այս մասին խիստ թարմ եւ պերճաբոս են «Բագուլ», «Երեսնի», եւ «Նախիջեւանի» սարսաղագիրիկ դէպքերն :

Թերեւս դանիշին մեր մէջ տակաւին ռամիկներ, որ մեր այս թարմ կոտորածներուն պատճառը չուզին Գրիստոնեայ բարի թագաւորի (Վ) մը վերագրել. ալ մեր ռուսահայերուն : Ինչպէս երբէք, մեր ռուսահայ եղբայրները երբէք Ռուսաց դէմ գէնք բարձրացնել ո'չ խորհած են, եւ ո'չ ալ քաղաքած են, ալ եղած են միշտ բարի եւ պարտաճանաչ հպատակներ, երկրացիներ, ժրջան աշխատողներ, լաւ վաճառականներ, խանութպաններ, արհեստաւորներ, երկրագործներ եւայլն եւայլն. եւ իրենց արդար քրտանցը վստակով քիչ թէ շատ ունեւորներ, եւ բաղաւորաբար իրենց հետ խառն ապրող օտարազգիներու աւելի բարգաւաճ եւ զարգացեալ լինին եղած է Ռուսահայուն ամենամեծ եւ աններելի յանցանքն. որուն չը կրցաւ հանդուրժել Ռուսի չար, նախանձաւ եւ գարշելի բռնապետութիւնը :

Ռուսաց թշնամանքը անդուռն ի վեր չը պարփակէր մի միայն Ռուսահայի նկատմամբ, ալ կը տարածուէր նոյնչափ ալ Տաճկահայի եւ Պարսկահայի հանդէպ սա զլխաւոր պատճառներով :

1. Տաճկաստանի եւ Պարսկաստանի իւր տիրապետելու անյաղ տենչը թույլատու է իրեն որ այդ երկիրներու մէջ ուժեղ հայ տարրի մը գոյութիւնը խաղաղ ջնջուի :

2 Ասիոյ մէջ ուժեղ հայ տարրի մը գոյութիւնը կրնայ մէկ օր իւր շահերը վտանգել, թէեւ ամբողջ հայերն իւր հաւատարմ եւ երդուեալ հպատակներն իսկ եղած լինին. զի Ասիոյ այն մասին մէջ ուր հայեր կան ու կապրին, միշտ անհուն առաւելութիւններ ցոյց տուած են իրենց չըջապապատող զանազան խառն ազգաբնակչութեանց հետ բաղաւորմամբ :

3 Անհրաժեշտ էր որ կովկասահայր ընկճուէր այս վերջին տարիներու մէջ. զի կովկասահայն էր եղած մի-

ակ նիւթական եւ բարոյական սպասարանն ու միթիւթանքն հալածեալ եւ տանջեալ Տաճկահայուն եւ Ռուսիկ Պարսկահայուն : Ռուսի ամէն ղեով այդ ապաստարանն քանդելու ջնջեց վճռուած էր : Թէեւ մեր իմաստուն եւ չըջապապ մի քանի օրապրողներն միշտ վերապահութեամբ մեր Ռուսահայերուն կը յորդորէին ինքնապաշտպանութիւն եւ փոթորիկին մօտաւոր լինելուն համար բայց մեր Ռուսահայերու մեծ մասն ալ տակաւին ռամիկ լինելով չէր կարող ըմբռնել թէ ձերմակ արծիւ բարի քրիստոնեայ թագաւոր (Վ) գահան Համիտի ընթացքին կրնայ հետեւիլ, որով հարկ եղած պատրաստութիւնն չունցանք, եւ այս անգամ ալ հայը ոչխարանման կը կոտորուի կովկասի մէջ, աւաղ :

Ռուսաց հայախնջ քաղաքականութիւնը կսկսի կովկասի մէջ առաջին անգամ ոտքերնին դրած վայրկեանէն. պատմութեան այդ էջը շատ երկար է, տակաւին մեր մամիկները վարժ են ըսելու «Ռուսին ոտքը չորնայ, կոխած տեղը խոտ չի բուսիր » : Մինչեւ 77 թուականին կատարուած թշնամութիւնները յայտնի եւ հրապարակային փաստացումներու կրթութեան չէին, 77 էն սկսեալ Պետրքուրգի արքունիքէն դուրսը կը թափուին կաշառներու սիրտն, եւ թայմը Պետրքուրգի թղթակիցը գահունք գիւրաւ կը փոխադրէր ի լոյս աշխարհ. զանի երկու տարի առաջ գրեթէ վատաբար արտաքսեցին, յուսալով թէ յաջողեցան առաջին տանուլ, մինչդեռ անգին անմահն է. Անիւնէն իւր «Բեղարդուրիկան խաբրիկներ»ով մեզ կուտար արդէն այն գաղտնիքներն, Լ. որոշումներն որոնք մեր վատ թշնամին մոլորին մէջ կը նիւթէր մեզ հանդէպ :

Սկիզբն երկանցն էր. 93 Յունիսի 12 ի իւրաքանչեւ գործադրութիւնն՝ հայապատկան կալուածներու բռնութեամբ յափշտակումն. այդ օրէն սկսեալ պաշտօնապէս հոսիլ սկսաւ մեր հայ եղբայրներու արիւնն, եւ դեռ չենք գիտեր տակաւին ինչ ալքեր պիտի առնէ ինչպէս պիտի վերջանայ քանի որ մենք այս օր բոլոր արտասահմանեան հայերս անտարբեր նստած յիմար գիտողներէ անգին չինք անցնիր :

Մեր գրութեանց ժԲ. շարքը վերջաւորած էր այսպէս «Այլեւս մեզ համար լքման չըջանը սկսած էր » : Բայց այժմ ալ տեղն է աւետել մեր բոլոր հայ եղբայրներուն թէ, լքման չըջանը բոլորեցաւ, խառնակալից Ապագայի մը նախադուրը հասած լինել կը կարծենք. ուրեմն այս բարեգէպ պարագային գիտնաք զգնութեամբ մօտենալ դրանք եւ զայն քանալ յաջողակութեամբ :

Ռուսի, փութացէք դուք ո'վ հայ քաջ խելօքներ եւ զիւտանգէտներ. միաձայն բարձրացուցէք ձեր ձայնն : «Սուգան բացուէ՛, Սուգան բացուէ՛ »

Թէ ինչպէս բոլորեցաւ այդ լքման չըջանը :

— Յաջորդին փորձեցէք զայն պարզել :

2

ՍՈՒԼԹԱՆԸ ՅՐԶԻԳ

«Գրուիէ Էօօթէէն» ի մէջ կը կարդանք հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները :

«Վստահելի ազրիւրէ ստացուած տեղեկութեանց համեմատ, վերջին անգամ Բանկալի ի մէջ պատահած մեծ հրդեհը՝ որ մուխիւրի վերածեց Եօթանասուն մեծ տուներ, երբէք ու է սճրագործ ձեռքի մը գործ չէ, ինչպէս որ Պալատը հրատարակել տուաւ քանի մը եւրոպական թերթերու, այլ Պալատին ճճրագործութեան արդիւնքն է :

«Բանկալի զինուորական վարժարանին դէմի կողքին վերայ հաստատուած կալուածներէն ոմանց մէջ կը բնակէին կասկածելի բարբի տէր անձեր եւ քանի մը դպրոցական երիտասարդներ հոն ժամադրավայր ըրած էին. զինուորական վարժարանի երկու տնօրէնները, Խոմայիլ եւ Բիլա փաշա, որոնք երկուքի ամէնէն վտանգաւոր լրտեսներէն են, պատրուակ բռնանցին դպրոցական երիտասարդներու այդ ժամադրական հաւաքումները, համախառնութեամբ պատրաստուած տեղեկագրով մը Սուլթանին իմացնելու եւ հաստատուել թէ դպրոցականները աւելի գաղտնի գործելու համար այդ բնակարանները իրենց ժամադրավայր ընտրած են եւ հոն դաւադրութիւն մը կը պատրաստեն Սուլթանին կեանքին դէմ :

«Այսու չափով որ երբէք չը մոռնար այն յիշատակելի դերը զոր խաղացած են Զինուորական վարժարանի աշակերտները Ապտիւլ Ազիզի գահընկեցութեան տունն, չը վարանեցաւ ուխտելու որ քանդել տայ այդ կալուածներու ամբողջ կարգը եւ չը գիտցուի թէ որու ձեռքով եւ ինչ միջոցաւ այդ ամբողջ բուցերու ճարակ ընել տուաւ : Ահա տայ է ճիշդ պատմութիւնը այդ հրդեհին Պալատին մէջ չըջող շատ վստահելի տարածայնութեան նայելով :

«Այս առթիւ վերլիչենք թէ այս առաջին անգամը չէ որ Սուլթանը հրճիգ մը կը ներկայանայ ինչպէս զիւրեղանալի զինացուն Ղազի Օսման փաշայի մեծ տունը որ երկուք Բէօշքի շատ մօտը կառուցուած էր, այրուեցաւ Սուլթանին հրամանին վրայ եւ այդ եղաւ Օսման փաշայի տղուն Պրուսա քուրէնէն քիչ ժամանակ առաջ. նոյնպէս Եէմէնի մէջ մեռնող բժիշկ Իմին փաշային այրի կնոջ բնակած տունը՝ որուն քանի մը պատահանները Զրաղանի պալատին պարտէզին վերայ կը նայէին, ուր բանտարկուած էր գժրաղը Սուլթան Մու-

րատը, բոցերու ճարակ եղաւ գեւ ջանի մը տարի առաջ Սուրբան Համարի թերադրու թեամբը :

ՍՈՍՏԱՐԿ ՄԸ

Առ Տօրթ. Մ. Եայպանդեան
Մեծարոյ Տնօրէն «Գիտութիւն»
ազգագոյտ հանդէսի

Լօզան

Տէր,

Ձեր հանդէսը որ իր համայնագիտական ներթիւրու տեսակէտով մեծ պակաս մը կուգայ լիցնել մեր ազգ. մամուլին ու հանդիսներու շարքին մէջ արգարեւ արժանի է անվերապահ գովեստի, այս ճշմարտութեան համոզուած են իման անոնք որ կը կարգան ձեր հանդէսը :

Ձեր «Գիտութիւն»ը, արժանի իր անունին, պիտի մնայ այդպէս ինքնու համար օգտակար առաջնորդ մը իրենց ճիւղին մէջ իրենց քայլերը զօրացնող ու պայմանները ուսուցանող մէկ հատիկ հաղէտը. քանի որ հոն ուսուցիչ թէ՛ արուեստաւոր բնաբան թէ՛ բժիշկ, տան տիկին թէ՛ աղաքին պիտի գտնեն ու առձեռն պիտի ունենան յաճախ կարողալու, ուստի մնասիրելու եւ իմաստասիրելու այն ամեն տեսութիւններ որ այնքան կարեւոր են իր արուեստին զիտակից իր պաշտօնը աւելի արգիւնաւոր ընծայելու կոչուած արուեստագէտի մը համար :

Արդ, Դուք որ Ձեր տարապայման համեստութեամբ «Գիտութիւն»ը ձեր երեւակայած բարձրութեան հասցնելու օգտակար ու ծափելի մտածումով մը վեց ամիսը անգամ մը, ինչպէս կը գրէք, Ձեր ընթերցողներուն խորհրդակցութեանը գործակցութեանը պիտի գիտէք հզօր երաշխիք մ'է համոզուելու համար թէ Լօզանի Հայկազեան վարժարանի այս օգտաշատ հրատարակութիւնը գիտու-

թեան հաղորդիչ թիւը եւ բարեշնչան գեղեցիկ յիշատակարան մը պիտի ըլլայ մեր հայ համայնքին համար :

Պարկէշտ ու ճշմարտ արուեստագէտ մը Մէյսոնիէ ըսած է «երբ չեմ վարանիր օրերով քերելու քերթելու եւ վերականգնող մը որպէսզի ինքզինքս գոհացնեմ եւ ջանամ խաղաղութիւն ընելու : Ահ այս լուսավորչը զոր մարդ կը զգայ իր մէջը, եւ ստանց որոյ ճշմարտ արուեստագէտ մը երբեք գոհ չէ ինքն իրմէ : Ձեզի կանոն ըրէք Ձեռն եւ Ձեր գործէն գոհ չըլլալը : Արուեստագէտ մը որ բաւականանայ իր նախագիծովը կորսուած է : Երբեք չեմ ստորագրեր նկար մը մենչեւ որ անիկա իմ հոգւոյս համոզման լիցնած չըլլայ» :

Ահա այս ծայրայեղ անկեղծութեամբ ու Մէյսոնիէի ճշմարտ սկզբունքով է որ կերեւիք գուք «Գիտութիւն» սրահակներուն մէջ :

Ձեր հրատարակութեան մասին այնքան մեծ է նկատումս որ խիստ ապար իզգամ զիս զբիշը ձեռքս մօտենալու անոր : Բայց եթէ անոր պրակտիկ, գիտական եւ արուեստագիտական արժէքին վրայ չեմ կըրնար իմ խորհրդածութիւնները ընել պիտի կրամ սակայն անկեղծօրէն հրապարակային ընել առաջարկ մը որքան որ ուրիշներ շահախնդրական ոգի մը պիտի նշարեն անոր մէջ :

Ձեզի հետ մէկտեղ ես ալ կը հաւատամ թէ՛ ձեր հանդէսին հրատարակութեան ձեռնարկը ըրած էք ձեր համայնքին եւ միանգամայն ներկայ եւ ապագայ սերունդին օգտակար ըլլալու ազնիւ փափաքէն մղուած, բայց ինչպէս համոզուած էք զուք ալ ապագայ սերունդին դաստիարակութեան նուիրական պաշտօնը յանձնուած է հայ ուսուցչներուն եւ հետեւաբար ուսանող մանկաւթիւնն ալ իր զարգացման եւ յառաջդիմութեան պատուաստը կը ժառանգէ զպրոցական սիսէն ներս իր դաստիարակներէն : Անհարկի բացատրութիւն մը առում կըլլանք վերստին կրկնելով թէ հայ ուսուցչիւնը իր ձեռքին տակ ունենալով «գիտութիւն»ը եւ անոր ուղղութիւնը ու

նպատակ ընդգրկող նմանօրինակ հանդէսներ որչափ պիտի մշակէր իր միտքը եւ որքան նոր թոնիկի առած պիտի ըլլայ իր լեզուն եւ փոխադարձաբար որչափ օգտուած պիտի ըլլայ դաստիարակուող սերունդըն ալ իրենց ուսուցչներուն այս բարեբար եւ սրտապնդիչ ազդեցութեանը ենթակուելով, Բայց միեւնոյն ատեն գաղտնիք մը չըլլալով հայ վարժապետներու նիւթական անախտանքի վիճակը կուգամ քանի մը տողով հետեւեալ խոնարհ առաջարկը ընել Ձեզի :

Ամէն ուսուցիչ, ուսուցչուհի նոյն իսկ քահանայ որպէսզի մատչելի ընէ իրեն «Գիտութիւն»ը բաժանորդագրուի անոր հարկին 50 զեղչով մը այսինքն տարեկան 6 ֆրանկ միայն վճարով, իսկ որպէսզի անոնք ալ իրենց կարգին խմբագրական այս գոհողութիւնը քաջաւերած ըլլան գործնականապէս, պարտաւոր ըլլան երկու բաժանորդ ներկայացնել «Գիտութիւն»ին պարտականութիւն ստանձնելով միանգամայն անոնց բաժնեգրներու զանձման :

Ասով թէ կըլծական գործի պաշտօնեայք մօտիկ ապրած ըլլալով թերթին կօդուելն եւ թէ ձեր բեղուն ձեռնարկին արգաւանդ իրականացուող զիտելով հոգեկան անբացատրելի վաշելքը կուեննար :

Յարգանքներ Ձերմ արապայտութիւններով :

Ձերդ

ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ

30 մայիս 1905
Թ. Բաղարճրգ.

ԱԶԳԱՅԻՆ

Մանթո որբախնամ—բարերար Տ. Կարապետ Եղեանց յանկարծամահ եղած է Բեդեքապուրիի մէջ մայիս 31 ին : Յուզարկաւորութիւնը կատարուած է յունիս 2 ին շատ շքեղ կերպով ի ներկայութեան հայ եւ օտար բարձ-

րաստիճան անձնաւորութեանց եւ խուռն լազուութեան մը. բաղմաթիւ պատկներ զետեղուած են հանգուցեալին գերեզմանին վրայ :

Եղեանցի մահուան տխուր լուրը ստանալով շատ տեղեր հանգիսաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուած է Պոլսոյ Բերաթի եկեղեցւոյն մէջ ալ այդ առթիւ Պատրիարքը յատուկ պատարագ մատուցած եւ բոլոր եկեղեցական դասը հրաւիրած է հոգեհանգստեան արարողութեան մասնակցելու : Կրօն. Ժողովը իր նիստը դադարեցուցած է ի նըշան սգոյ :

—Պուրկաղի կամայական թաղականութիւնը պաշտօնէ դադարած եւ նոր ընտրութիւն կատարուած է : Նոր թաղ. Խորհրդոյ անգամ ընտրուած են Տ.Տ. Կարապետ Վարդապետեան, Պետրոս Տէյէր-մէնճեան, Գեորգ Չամեան, Պօլոս Բուլճեան, Արտաշէս Պալիկեան Գրիգոր Բարթամեան եւ Յակոբ Սարգիսեան :

—Կերասան Տ. Կարապետ Գուրֆաեան Սօփիա հասած ըլլալով, Շէյքսբերի տրամները ներկայացնել կը ձգտի եղեր կը յուսանք որ մօտ օրէն Վառնա ալ գայ եւ մեզ առիթ տայ ականատես ըլլալու իր քաջընտած յաջողակութեան :

—Բացի Սասունէն, Բաղէշէն եւ Վանէն եւ նպաստ կը խնդրուի այդ գաւառներու ազգայնոց հաւար որոնք չքաւորութեան մատնուած են եւ խոտերու արմատներէ պատրաստուած սե ու կոշտ հաց մը միայն կրնան գտնել կրօնէ ամերիկեան նպաստացոյց ընկերութեան քարտուղարը :

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

31

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ

(Շար. նախորդ քիշէն)

Թ

Մանաւորապէս միտքը պահած էր ֆրանսացի ուստիկանապետի մը այն համոզումը, թէ ամէն ծանր դէպքի մէջ փնտռելու է կինը : «Փնտռեցէ՛ք կինը» : Երբ հայերը ձերբակալուելու բանտարկելու թուականը բացուեցաւ, ո՛ր հայն ալ որ բողոքէր ու զնտանը նկատէր, եւ ինչ բանի պատճառաւ որ ըլլար, էֆէնտին ուրիշ բան չէր ըսեր բայց եթէ՛ «փնտռեցէ՛ք մեծ Յ» : Մեծ Յ ըսելով կը հասկնար յեղափ խութիւնը, բառ մը զոր ամբողջութեամբ բերանը առնելու չէր համարձակեր : Ամէն չարիքի պատճառ մեծ Յ էր : Հիմակ Օգսենտիոս էֆէնտին քարը տեղը կը գնէր : Իրեն բանտարկութեանը համար ալ մեծ Յ փնտռուելու էր : Էֆէնտին ճիշտ պատասխան տուաւ՝ «փնտռեցէ՛ք մեծ Հ» ըսելով : «Մեծ Հ»՝ հայն էր : փնտռեցէ՛ք հայը, փնտռեցէ՛ք հայութիւնը ամէն ձերբակալման մէջ : Էֆէնտին գիտողութիւնը հիւրերուն շատ հաճելի անցաւ, ճիշտ կացութիւնը կը պատկերացը-

նէր : Ամէն հայ կը բռնուէր, կը բանտարկուէր, կը ուղաննուէր, վասնզի հայ էր : «Փնտռեցէ՛ք մեծ Հ» ն ալ անկէ հոսքն ալ կարգախօս մը եղաւ :

Աւ Էֆէնտին իր կարգին ինքն ալ քարը տեղը գնել ուղեւորով, խօսքը հայկաբան էֆէնտինն ուղղեց ու ըսաւ :

—Օգսենտիոս էֆէնտի, Սողոմոն իմաստունը սխալեր է : Ա՛յլ դարձ, նո՛յն բարք : Կը հասկնա՞ս ես :

Անխրկութիւն էր, վեց տարի առաջ Տէր Յուսիկին վրայ յարձակմանը միջոցին, Օգսենտիոսի այն պատգամ խօսքերուն, թէ «այլ դարձ, այլ բարք», զոր ո՛չ ըսողը գիտէր թէ որմէն էր եւ ո՛չ լսողը :

—Ա՛յլ դարձ, նո՛յն բարք, կը հասկնա՞ս, Օգսենտիոս էֆէնտի, կը կրկնէր տան տէրը : Եւ հասկցուց, թէ դարեւր փոխուած էին, բայց բարքերը՝ ո՛չ : Տաճիկները մնացած էին այնպէս տաճիկ, ինչպէս քանի մը դար առաջ :

Ոտքի ելան սեղանատուն հրթալու համար : Էֆէնտին կարծես հարցնելու բան մը ունէր ու կը վարանէր : Վերջապէս, հայկաբանին դառնալով ըսաւ :

—Խօսքը խօսք կը բանայ : Ճանալով, Օգսենտիոս էֆէնտի, առեւտր հոս դարիպ տէրտէր մը եկաւ, տաք գլուխ մէկը, քոնափ անուշով զեղէ մըն էր, իր տնունն ալ միտքս չի գար... —Հա՛, սա տոմուզեղցի տէր Յուսիկը պա-

տասխանեց Օգսենտիոս էֆէնտին :

—Ճիշտ ան : Ատ խեղճ մարդը ետքէն էնկիւրի բռնուելու եւ բանտարկուելու է եղեր :

—Այո, շատ բան քաջեց, Աքեա արտորուեցաւ : Ետքէն :

—Ետքէն, 1895-ի ներհալներուն մէջ չ'տաւ :

—Խեղճ մարդ : Դեռ Աքեա՞ն է :

—Ոչ : Տեղապահ արքայանք իր պաշտօնավարութեան առաջին օրերը անոր եւ ուրիշներուն համար բարեխօսեց : Ազատուեցան :

—Աղէ՛կ, աղէ՛կ, Հիմակ ո՛ւր է : Երկր'ն է :

—Ո՛չ, հոս կուպսէ երկիր երթալու համար : Գարակէօմրիկի ժառը խրկուած է : Անգամ մը գացի տեսնուեցաւ հետը :

Խօսելով սեղանատուն գացեր էին : Էֆէնտին աւելի գուարթ կերեալ : Ուրախ ծաշ մը բրաւ, կատակաբանելով : Օգսենտիոս էֆէնտինն տուած լուրը իրեն շատ հաճելի եղած էր :

Ժ

Ա՛յ իրիկուն էր : Տէր Յուսիկ հանգստանալու պատրաստութիւններ տեսնել սկսաւ : Պանդուխտ տէրերով խօսքին մէջ, որ ժամուն բակին վրայ կը նայէր, իր կարասիք մեծկակ միւսէտ մը կար, երկայն բարձով մը, ու փայտէ ճերմակ սեղան մը եւ երկու պարզ աթոռ :

(Շարունակելի)

